ՇԻՐԻՆ-ՓԱՀԼԸՎԱՆ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Ըլելա ա, չի ըլել ժամանակով մի թագավորի տղա, անումը Շիրին-փահլըվան։ Դա որ բազարն ա դուրս ըլելիս՝ ինչ որ բեխա կուշտն ա ընկել, մատով տվել ա անկաճին, քոքիցը պուկ ա ընկել։ Էն քաղաքումը ինչղտար բեխա են ըլել, չիմ դառել են միանկաճանի։
Էրեխատերերը զուռիաթ չեն արել[1] Շիրին-փահլըվանին, որ ասեն.— Խի՞ ես ըտե անում։
Բեխաները հվաքվել են, մորն ասել են, թե.— Ըտենց բան չի ըլիլ, քու տղեն ա, խի չես խրատում։
Նա էլ փիքրն ա արել, թե «Իլլաճ չկա, պետք ա խափնով տանեմ մի տեղ բրախեմ»։ Տարել ա մի սարի գլխի, ըստի Շիրին-փահլըվանը սովել ա։ Մերը աղի բլիթ ա տվել, կերել ա, շատ ծարա-վել ա, ծարավութենեն թրլըփել ա ու գլուխը դրել մորը ծնկին, քնել։ Որ քնել ա, մերը գլուխը դրել ա քարի վրա ու ինքը եդ դառել, էկել իրա ամարաթը։ Շիրին-փահլըվանը շատ ա քնել, քիչ, ընդի աչքը բաց արել, տեհել ա, որ մերը չկա։ Ընդեղ վեր ա կացել, ման գալով գնացել սարի գլուխը, տեհել ա մի մենձ էր, էրի աղաքը պատած, դռնակի վրա մի ջղացաքար գծած։ Էդ ջաղացի քարը վեր ա անում ու վրա անում. գնում, ընկնում ա մի ահագին ձորի մեջ։ Էդ էրը Քառասուն հարամբաշու բնակարան ա ըլել։ Դա նի ա մտնում, տենում, որ մի օխտն ընկանի պղինձ դրած ա կրակի վրեն, ասում ա. «Տենա՛մ, թե մենակ կարենամ վեր ունեմ, սրա տիրոջ հախիցն էլ կգամ»։ Վեր ա ունում, գետնին դնում, եդ դնում կսկարենքի վրեն։ Եդնա ինքը մի մութ քյոշում խտոր ա ընկնում, քնում։
Էն Քառասուն հարամբաշին րիգունը որ գալիս են, մնին աղաք ըղու են անում, թե հլա գնա տես դուռը ընենց ա, ոնց որ շինել ենք, թե օքմին ա էկել քանդել։
Գալիս ա տենում, որ ջաղացաքարը հրե էն ձորումը վեր ընկած։ Գալիս ա ընկորտանցը ասում ա.— Մենք քառասունով զոռի վեր ունեինք ըռխին գցեինք, հըմի էդ ինչպե՛ս հարամի ջանլու ա, որ քարի ա վրա արել, գձել ներքի ձորը։ Էկեք կորչինք, որ դա մեր վայնասին տալ պտի։
Եդնա շատ փիքրն են անում էդ Քառասուն հարամբաշիքը, թե ի՛նչ ըլելու ա, մի օր բլելու ա մեզ, էկեք խոսքը մին անենք նի մտնենք էրը։
Նրանք գնացին էրը մտան, պղինձը տեհան ժաժ տված ա, հաց կերան ու ամենքը իրանց տեղը եդ նստեցին, էդ բանիցը զրից արին, թե էս ի՞նչ հրաշք էր, որ տեհանք, էս ի՞նչ պրտի ըլի։
Ըտե հարամբաշիների մինը Շիրին-փահլըվանի վրեն թիկն էրետ, Շիրին-փահլըվանը ասավ.— Ես քու բարձը չեմ, որ ինձ վրա թիկն ես տալիս, դե՛ն գնա։
Որ ասավ ու վրա նստեց, էդ Քառասուն հարամբաշու թուքը ցամաքեց։
Էդ հարամբաշիների գլխավորը դրան խոսացրուց, թե.— Ի՞նչ մարդ ես, հեր, մեր ունե՞ս։
Ասավ.— Անտեր, անտիրական մարդ եմ. մի բան էլ ա ունեմ
ոչ։
— Դե՛,— ասավ,— որ անտեր ես, ես էլ անզավակ եմ, արի քի տղացու վերունեմ։
Նա էլ ասավ.— Ո՛ր դու վերունես, ես էլ կըլիմ։
Էտա էդ րիգուն ինչ արին, ռավոտը որ լիսացավ, գնացին ֆորս։ Հարամբաշին ջոկ գնաց, հարամիքը ջոկ-ջոկ գնացին, էդ տղեն էլ մի ժանգոտ խանչալ ուներ, էդ խանչալը վեկալավ, ինքն էլ ջոկ գնաց։

---

1 Չեն համարձակվել—Ծ. Բ.։

Գնաց մի չոբանի ջրհեց, տեհավ էդ չոբանը ըստա կարճ մարդ ա, մի թիզ։ Ամեն լեզվի էլ բարով տվուց, բարովը չի առավ, ջիգրը որ էկավ, տեհավ բարովը չի առավ, խանչալը հանեց, ասավ.— «Տա՛մ սրա քյալլին, մեջտեղիցը շախկա տամ»։ Խանչալը որ վրա բերուց, տեհավ էն կոնեն կաղնած։ Ոնց արավ՝ կարաց ոչ. խանչալը որ վրա բերուց, տեհավ էն կուռը կաղնած։ Րիգունը, որ գնացին թոփ էլան, մի քոսա ընկեր ունեին, նա ասավ իր հնկորտանցը.— Սա մեր գլխին օղբաթ պտի բերիլ. ընենց անենք, որ գլխներիցս ռադ անենք։ Ես մի սուտ կասեմ, դուք էլ վկութին տվեք, ասեք՝ մենք էլ տեհանք, բալքի գնա կորչի։
Որ թոփ էլան հաց կերան, պրծան, ասավ.— Ախ՛ ախպերտինք, դուք էլ տեհա՞ք էն բանը երկնքումը։
Շիրին-փահլըվանի հերացուն ասավ.— Հը՛, Քյոսա՛, էլի շնութինդ բռնե՞ց։
— Հա՛,— ասին,— մենք էլ տեսանք, թե ֆըլան դևի ոսկե խնձորը ոսկե սինումը, երկնքումը խաչ աներ։ Էդ ո՞վ կբերի՝ Շիրին-փահլըվանը կբերի։
Շիրին-փահլըվանը հարցուց.— Ինչքա՞ն օրվա ճամփա ա։
Ասին.— Մի ամսվանը՝ կգնաս, կգաս։
Ասավ.— Գնացի՛։
Էն ռավոտը Շիրին-փահլըվանը ըղու էլավ, գնաց։ Շատ գնալով գնաց տեհավ ծմակի միչին մեկ ամարաթ, իրեք ախչիկ միջին նստած։
Էդ ախչկերքը, ո՛ր Շիրին-փահլըվանին տեհան հա՛, մինն ասավ.— Արի՛, Շիրին-փահլըվան ջա՛ն, ծնկանս վրա տեղ ունես։
Շիրին-փահլըվանը գնաց նրա ծնկանը վրա նստեց։ Իրեք օր, իրեք գիշեր էդ ախչիկը Շիրին-փահլըվանին իրա ծնկան վրա պահեց, եղնա ասավ.— Կերթա՛ս, որ հասնես բաղին,— ասավ,— Իրեք գլխանի դևը գլուխը թքավորի ախչկա զոգումը դրած քնած ա։ Բաղի դուռը որ բաց անես, ղոչը մի կոնեն ա կապած, գելը մի կոնեն ա կապած, ղոչի աղաքին դմակ ա դրած, գելի աղաքին՝ խոտ։ Դմակը վե կալնուս գելի աղաքին կդնես, խոտը՝ ղոչի։ Կերթաս, ոսկի խնձորի տեղը թագավորի ախչիկը շանց կտա։ Որ եդ դառնաս, եդ չըմտիկ անես, քար, քոլ լեզու կըլի, թե՝ տարա՛վ, որ էդ մտիկ տաս, կմնաս միչին, դևը կգա քի փոթոցի կտա։
Էն տղեն գնաց ըտենց արավ, դմակը դրուց գիլի աղաքին, խոտը դրուց ղոչի աղաքին, գնաց տեհավ Իրեք գլխանի դևը գլուխը դրել ա մի թագավորի ախչկա զոգումը քնել։ Օխտն օրվա քուն մըտած ա ըլում դևը։
Ախչիկն ասում ա.— Ա՛յ տղա, ո՞ւր էկար, վեկկենա էս անօրենը քի կփչացնի։
Շիրին-փահլըվանն ասավ.— Շատ մի խոսալ, դու, ոսկե խընձորը, ոսկե սինին որդի՞ ա դրած, է՛ն ասա։
Ասավ.— Հրեն հարիր գազանոց ֆորումը ջղացքարը ռեխին դրած։
Ախչիկն ասավ.— Ես էս քարը ո՞նց դենը գցեմ, որ ոսկե խնձորը հանեմ։
Շիրին-շահը կուռը գցեց, քարը շըպռտեց, ախչկանը քաշ արավ, ֆորիցը ոսկե խնձորը, ոսկե սինին հանեց։ Որ հանեց, ախչկանն ասավ.— Աղաքս ընկի՝ գնա՛նք։
Ախչիկը ոտը դեմ արուց, ասավ.— Ո՞նց գամ, վախում եմ դևից։
Ծործորանքին դումսուքեց, առաջ խառնեց։ Ընդիան, որ ըղու էլան՝ քար, քոլ լեզու էլան, թե.— Դև՛, տարա՛վ։
Դևը զարթնեց, տեհավ, որ տանում ա։
— Ղո՛չ,— ասավ,— հասի՛։
Ղոչն ասավ.— Քու հերն էլ անիծած, ես դմակ ուտո՞ղ ի, որ դմակը աղաքս իր դրե։ Էս մարդը ինձ լավութին ա արել, աղուհացը մոռանալ չեմ։
Գիլին ասավ.— Բռնի՛ր։

Գելն ասավ.— Էդ մարդը լավութին ա արել ինձ, աղուհացը մոռանալ չեմ։
Շիրին-փահլըվանը դուս էկավ բաղի դրսի կուռը, Դևն ասավ.— Հըլե՛ մի կաղնի տենամ՝ ի՞նչ մարդ էս։
— Արի՛,— ասավ,— կաղնել եմ, արի՛, յա քու մերը լաց կըլի, յա՝ իմ։
Որ հասան իրուր, Շիրին-փահլըվանը ժանգոտ խանչալը ածավ, Դևի իրեք գլուխը իրուր հետ գնաց։
Գնացին տեհան, որ էրկու ճամփա իրանցե ջրկվում ա։ Ախչիկն ընդի կաղնեց, ֆոքոց հանեց։
Շիրին-փահլըվանն ասավ.— Էդ խի՞ ֆոքոց քաշեցիր։
Ասավ.— Էս իմ հոր քաղաքի ճամփեն ա։
Թե.— ասավ,— ուզո՞ւմ ես գնա՛լը։
Թե.— Հա՛,— ասավ։
Թե.— Մենակ կարա՞ս գնալ։
Թե.— Կարա՛մ։
— Դեհ ո՛ր կարաս, գնա՛,— ասավ Շիրին-փահլըվանը։
Ախչիկը ճամփա ընկավ, գնաց։
Շիրին-փահլըվանը վեկալավ ոսկե խնձորն ու ոսկե սինին, էկավ Քառասուն հարամբաշիների կուշտը։ Համա մի ամսից իրեք օր ուշացավ։ Ամսու գլխին Քյոսան ասավ.— Շիրին-փահլըվանը էկավ ոչ, Դևը սպանեց։
Նա գիտեր ոչ, էն ախչիկը իրեք օր Շիրին-փահլըվանին իրան ծնկան վրա պահել ա, ընդուր էլ ուշացել էր։
Եփոր Շիրին-շահը էկավ, Քյոսեն շատ տխրեց։ Ոսկե խնձորն ու ոսկե սինին ձեռներուն առան, թամաշա արին, ասին.— Էս մեր բանը չի, Շիրին-փահլըվանին ա սազում, նրան տվեք։ Տվին նրան։ Քշերը քնեցին, ռավոտը որ լիսացավ, էլեթ ֆորսի ցրվեցին։ Քյոսեն ընկորտանցը ասավ.— Էս ռիկուն էլ մի սուտ ասիլ պտիմ, դուք վկութին տվեք, որ բալքի գնա, էլ գա ոչ։
Ռիկունը, որ էկան թոփ էլան, հաց կերան, կրակի ղրաղին թիկն ընկան, Քյոսեն ասավ.— Տղերք,— ասավ,— էսօր տեհա՞ք էն բանը երկնքումը խաղ աներ։
Ընդիան Հարամբաշին ասավ.— Քյոսա՛, էլի շնութինդ բռնե՞ց։
Թե.— Տեհա՞ք,— ասավ,— ոսկե որձակը ոսկե սինումը խաղ աներ։
Թե.— Տեսանք,— ասին,— ո՞ւմ բանն ա, որ բերի։
Քյոսեն ասավ.— Էլի Շիրին-փահլըվանը կբերի։
Ասավ.— Քանի՞ օրվան ճամփա ա։
Ասավ.— Էրկու ամսումը կերթաս, կգաս։
Ասավ.— Կերթամ։
Էն ռավոտը Շիրին-շահը գնաց էն ախչկերանց կուշտը։ Էդ ախչկերանց միջնեկ քիրը, որ տեհավ Շիրին-փահլըվանին, ասավ.— Արի՛, իրեք օր, իրեք քշեր ծնկանս վրա տեղ ունես։
Շիրին-փահլըվանը գնաց նստեց միջնեկ քվոր ծնկանը, իրեք օր, իրեք քշեր քուն էլավ, եղնա ախչիկը շանց էրետ գնալու ձևերը։ Ասավ.— Ո՛ր կերթաս բաղի դուռը բաց կանես, էլի մի ղոչ, մի գել դռան աղաքին կապած ա, էլի ղոչի աղաքին դմակ ա դրած, գիլու աղաքին՝ խոտ։ Դմակը վեկալ գիլի աղաքին գձի, խոտը՝ ղոչի։ Կերթաս, Հինգ գլխանի դևը գլուխը դրել է թքավորի ախչկա գոգումը, քնել, ոսկե որձակը, ոսկե սինին հարիր գազանց ֆորումն ա, որ կհանես, քա՛ր, քո՛լ լիզու կըլին, ղի կտան. «Հա՛յ տարա՛ն», եդ չմտիկ անես, չվել բաղիցը դուս գաս։
Շիրին-փահլըվանը գնում ա, մտնում ա բաղը, տենում ա մի ղոչ, մի գել կաղնած, գիլի աղաքին խոտ ա զցած, ղոչի աղաքին՝ դմակ։ Դմակը վեր ա անում գծում գիլու աղաքին, խոտը՝ ղոչի։
Գնում ա, տենում Հինգ գլխանի դևը թքավորի ախչկա գոգում գլուխը դրած, քնած։

Ախչիկը որ տենում ա Շիրին-փահլըվանին, ասում ա.— Օձն իրա պորտով, ղուշն իրա թևով ըստի կարալ չի գա, էդ դու ո՞նց էկար. էսա դևը վե կկենա, քի կփչացընի։
Շիրին-փահլըվանն ասավ.— Շատ խոսալ մի, ասա տենունք, ոսկե որձակն ու ոսկե սինին ո՞րդի ա։
Ասում ա.— Հրե՞ս էս հարիր գազանոց ֆորումն ա։
Ասում ա.— Մտի, հանի՛։
Ասում ա.— Էս ջաղցի քարը ո՞նց դեն գցեմ։
Շիրին-փահլըվանը վեկալավ ընենց շպրտեց, որ հինգ գազ
գետնումը թաղվեց։ Եդնա ախչկանը քաշ արավ ֆորը, ախչիկը հանեց ոսկե որձակը, ոսկե սինին։
Տղեն ասավ.— Դե՛, արի աղաքս ընկի, գնա՛նք։
Ախչիկը ուզեր ոչ, Դևիցը վախեց։ Տղեն ծործորանքին դումսուքեց, աղաքը գծեց, քշեց։
Քա՛ր, քո՛լ լեզու էլավ, ասավ.— Դև՛, տարա՛վ։
Դևը զարթնեց, ղի տվուց.— Գե՛լ, հասի՞։
Գելն ասավ.— Քու հերն էլ անիծած, ես խոտ ուտող ի, որ
աղաքս խոտ իր գձե, էս մարդը ինձ լավութին արավ, սրա լավութինը մոռանալ չեմ։
Ղի տվուց.— Ղո՛չ, բռնե՛։
Էն էլ՝ ընենց։
Դևն ասավ.— Հըլա՛ մի կաղնի, տենում ի՞նչ մարդ ես։
— Կաղնել եմ,— ասավ,— արի՛։
Դևն ասավ.— Աղաքդ մի վարար ջուր կար, ո՞նց անցկացար։
Շիրին-փահլըվանը հսկացավ, որ Իրեք գլխանի դևի հմա ա
ասում, ասավ.— Ընդի ի՞նչ կար, մի ծըլծլան ջուր էր, լոկ տվի անցկացա, ըսկի ոտս թաց չի արավ։
Հասան իրուր Դևն ու Շիրին-փահլըվանը։ Էլի, որ Շիրին-փահլըվանը ժանգոտ խանչալը ածավ, հինգ գլուխըն էլ թռցրուց։
Էկա՛ն, էկա՛ն տեհան, որ ճընապարը էրկսի ա ջկվում։ Ախչիկը ընդի ֆոքոց քաշեց։ Շիրին-փահլըվանն ասավ.— Խի՞ էս ֆոքոց քաշում։
Ասավ՝ էս իմ հոր քաղքի ճամփեն ա։
Ասավ.— Ուզո՞ւմ ես գնաս։
Ասավ.— Հա՛։
Թե.— Կարա՞ս մենակ գնա։
Ասավ.— Խի՞ կարամ ոչ։
Ասավ.— Դե, գնա՛։
Ախչիկը էն ճամփովը գնաց, ինքը՝ մեկել ճամփովը։
Էրկու ամիսը որ թըմըմեց, Քյոսեն շատ ուրախացավ. «Էն ա,— ասավ,— Դևը դրան սըպանեց, էլ գալ չի»։ Համա իրեք օր էլ որ անցկացավ, մին էլ տեհավ՝ Շիրին-փահլըվանը գալիս ա։
Գլխին տվուց, ֆոքոց հանեց թե.— Էս հետ էլ պրծավ։
Շիրին-փահլըվանը ոսկե որձակը, ոսկե սինին բերուց տվուց հարամբաշուն, իրարու ձեռից խլխլեցին, մտիկ տվին, ասին.— Էս Շիրին-փահլըվանի լայեղա կան ա, նրան տվեք, մեզ սազում չի։ Տվին նրան։
Էքսը էլետ ֆորսի գնացին։
Քյոսեն ասավ.— Էլ չէլավ, ո՛րդի ըղու արինք, սալամաթ էկավ։ Էլի մի սուտ պըտիմ խոսի, տեղը գիտեմ, հըմա տեհել չեմ։ Ի՛նչ որ ասեմ, դուք վկութին տվեք։

Ռիգունը էկան թոփ էլան, հաց կերան, օջախի ղրաղին թիկն տվին։ Քյոսեն ասավ.— Էսօրի մի արմացք տեհա, դուք էլ տեհաք ո՞չ։
Ընդիան հարամբաշին ասավ.— Քյոսա՛, էլի շնութինդ բռնե՞ց։ Ասավ.— Աստվա՛ծ, երկի՛նք, գետի՛նք վկա, դուզ եմ ասում. ոսկե սինու միջին հրեղեն թուրը խաղ աներ երկնքի միջին։ Չիմն էլ վկութին տվին.— Հա՛, մենք էլ տեհանք։
Քյոսեն ասավ.— Ո՞վ կբերու տենաս։
Ընդիան էլի.— Շիրին-փահլըվանը պտի բերի, ով պտի բերի, դրա բանն ա։
Շիրին-փահլըվանն ասավ.— Բե՛րի։ Ինչքա՞ն օրվա ճամփա ա։ Քյոսեն ասավ.— Իրեք ամսեն կերթաս, կգաս։
Էն ռավոտը Շիրին-փահլըվանը ըղու էլավ, գնաց էլետ էդ ախչըկերանց կուշտը, պուճուր ախչիկն ու միջնեկը եդ իրանց ծնկի վրա նստացրին, համա բան չգիտեին, որ ասեին։
Ըտեղ մենձ քիրը ասավ.— Շիրին-փահլըվան, համեցե՛ք,
ծնկանս վրա տեղ ունես։
Շիրին-փահլըվանը գնաց մենձ ախչկա ծնկին իրեք օր, իրեք քշեր նստեց։ Մենձ ախչիկն ասավ.— Չվել Օխտը գլխանի դևի բաղը հասնիլը կես վերստ ղում ա, չվել մեջքդ ավազի մեջը թաղած պտես գնալ, թե կարացիր էդ ղումը ճղեցիր, գնացիր՝ եդ կգաս, թե կարացիր ոչ՝ եդ չես գալ։ Որ բաղին հասար, եռսունըինն դուռը կա վրեն արած, կհամբարես էդ դռները, կեսը մի կռնի վրա կգցես, կեսը՝ մեկ, էն մեջտեղի դուռը բաց կանես, նի կմտնես։ Որ նի մտար, ասլանը մի կռնին ա կապած, ղոչը՝ մին։ Դմակը ղոչի աղաքին ա դրած, խոտը՝ ասլանի։ Խոտը կդնես ղոչի աղաքին, դմակը՝ ասլանի։ Նորից տասչորս օր քուն մտած կլի Օխտը գլխանի դևը, գլուխը թքավորի ախչկա գոգումը դրած, էդ ախչիկը քեզ շանց կտա ոսկի սինու ու հրեղեն թրի տեղը։ Դե՛, գնա՛։
Էքսի ռավոտը Շիրին-փահլըվանը ճամփա ընկավ, գնաց հասավ ղմին. էն ղումը ոնց որ ալըրի թոզ իրան ոտի վրա, էնպես ճղեց գնաց։ Գնաց բաղին որ հասավ, տեհավ եռսունըինը դուռ, հիմի գիտի ոչ, որ դուռը բաց անի։ Համբարեց, տասնըինը դուռը մի կուռնը արեց, տասնըինը՝ մի կուռը, մեջտեղի դուռը բաց արավ, նի մտավ, տեհավ ասլանը մի կուռն ա կապած, ղոչը՝ մի կուռը։ Օխտը տարի ա սոված են. դմակը ղոչի աղաքին ա, խոտը՝ ասլանի։ Վի կալավ դմակը ասլանի աղաքին դրուց, խոտը՝ ղոչի։ Գնաց տեհավ Օխտը գլխանի դևը քնած ա, գլուխը մի ախչկա գոգումը դրած։
Որ տեհավ ախչիկը, ասավ.— Ա՛յ տղա, ափսոս չե՞ս, օձը իրա պորտովը, ղուշը իրա թևովը, սրա ահու դեսը մլակ էլ չի ժաժ գալի, դու ո՞ր խելքով ես էկել։ Էս հարամու ճանկը ընկել։ Էս ղոպեին, որ զարթնեց, մենձ թիքեն պետք ա անկաճդ փչի[2]։
Շիրին-փահլըվանը ասավ.— Ախչի, այրի-վեյրի շատ մի խոսալ. էս սըհաթին հրեղեն թուրն ու ոսկի սինին որդի որ ա, բի՛։
Ասավ.— Հըրե հազար գազանոց ֆորումն ա, ջաղցի քարը՝ վրեն։
Վի կալավ Շիրին-փահլըվանը ընենց վեր առավ քարը, որ հինգ գազ գիտնումը բաթմիշ էլավ։ Ախչկանը ֆորը քաշ արավ, հանեց հրեղեն թուրը՝ ոսկե սինումը դրած։
— Դե՛,— ասավ ախչկանը,— աղաքս ընկի՛։
Ախչիկը մխելի ոտը դեմ արավ։
Շիրին-փահլըվանը ասավ.— նազուտուզի տեղը չի, գնա՛,— ասավ, դյուրտմեց։
Որ ըղու էլավ հա՛, քար ու քոլ լիզու էլավ, ասավ.— Տարա՛վ։ Դևը վեր կացավ, ղի տվեց.— Ասլա՛ն, հասի՛։

---

2 Սովորաբար օգտագործվում է անկաճդ թողի, գուցե բանահավաքի վրիպակն է։—Ծ. Կ.։

Ասլանն ասավ.— Հեր օխնած, ես խոտ ուտո՞ղ ի, որ էս ա օխտը տարի խոտ իր դրել աղաքս. էն տղեն ինձ լավութին արավ, ես նրա լավութինը խի՞ կորցնեմ։
Ղոչին ասավ.— Հասի՛, ղո՛չ։
Էն էլ՝ ընենց։
Տղեն դուս էլավ բաղի դրսնը։ Դևն ասավ.— Ո՞վ ես, մի կաղնի։
— Արի՛,— ասավ,— կաղնել եմ։
— Ղաքիդ,— ասավ,— էրկու վարար ջուր կար, էն ո՞նց անցկացար, որ ինձ հասար։
Շիրին-փահլըվանը հըսկացավ, որ հինգ գլխանի ու իրեք գլխանի դևերի հմա ա ասում, ասավ.— Շատ ծրավել ի, էդ քու ասած վարար ջուրը՝ կատարս ըսկի թաց չի արավ։
Հասան իրուր, Շիրին-փահլըվանը էդիր օխտը գլխանի դևին իրան տակը, հրեղեն թուրը վեկալավ, որ վրա բերուց՝ օխտը գլուխն էլ մին հետ ծըպըթե՛ց։
Էլան ճամփու ընկան ախչիկն ու Շիրին-փահլըվանը, էկան մի ճամբու ջրկվելատեղ, էտ ախչիկը ընդի կաղնեց, էլի ֆոքոց քաշեց։
Ասավ.— Էգ խի՞ ֆոքոց քաշեցիր։
Թե.— Էս իմ հոր քաղքի ճամփեն ա,
Ասավ.— Ուզո՞ւմ ես գնալ։
Ասավ.— Ուզում եմ։
Թե.— Կարա՞ս մենակ գնաս։
Ասավ.— Կարա՛մ։
Ասավ.— Գնա՛։
Էն ախչիկը իրա մատանին հանեց, էրետ Շիրին-փահլըվանին, Շիրին-փահլըվանն էլ իրան մատանին նրան էրետ։
Ասավ.— Շիրին-փահլըվա՛ն, ինձ մոռանաս ոչ, ես քո՛նն եմ, դու՝ իմը։
Ըսենց իրարու խոսք տվին, ջոկնվեցին, ախչիկը գնաց իրա հոր քաղաքը, Շիրին-փահլըվանը էկավ էն իրեք ախչկա կուշտը։
Էս հետ իրեք օր, իրեք քշեր կերան, խմեցին, քեֆ արին։ Ըստուց եդը ճամփա գձեցին, գնաց։
Քյոսեն տեհավ, որ իրեք ամիսը անցկացավ, Շիրին-փահլըվանը էկավ ոչ՝ ուրախացավ, ասավ.— Օխտը գլխանի դևը հա էտ ա նրան սըպանեց։
Մին էլ տեհան, որ հրես դուս էկավ Շիրին-փահլըվանը։ Ըիկունը թոփ էլան, հաց կերան, պրծան, թուրն առան ձեռներուն, չիմն էլ մտիկ արին, տեհան, ասին.— Էս մեր բան չի, Շիրին-փահլըվանինն ա սազում, նրան տվեք։
Վեկալան տվին։ Է՛, շատ խոսացին, քիչ խոսացին, ամենքը իրանց տեղը քնեցին։ Ռավոտը լիսացավ, գնացին հանդը ֆորս։ Շիրին-փահլըվանը ման գալով մերու մեջ մի էրի ռաստ էկավ։ Գնաց տեհավ որ մի տաշտ լիքը հաց՝ էրիցը քաշ արած, մի ախչիկ էլ կուռը մեկնել ա, «Վայ,— ասում ա,— սոված մե՛ռա».
Թե.— Տաշտը գլխիդ վերի կռնեն,— ասավ Շիրին-փահլըվանը,— խի՞ ես սոված։
Ասավ.— Կուռս հասնում չի, Շիրին-փահլըվա՛ն, արի՛, վեքաշի՝ կուռս հասնի տաշտի հացին։
Որ գնաց վեքաշեց հա, ախչիկը Շիրին-փահլըվանի դոշին
ընենց քացի էրետ, որ Շիրին-փահլըվանը էն էրի քարումը մեր մտավ։
Ախչիկն ասավ.— Ինձ ճընանչո՞ւմ ես։
Շիրին-փահլըվանն ասավ.— Չէ, դուն ո՞վ ես։
— Ես էն ախչիկն եմ,— ասավ,— որ իրեք օր, իրեք քշեր մի ծնկանս քի պահեցի։
Նոր տնհավ, որ էս էն ախչիկն ա Շիրին-փահլըվանը։
— Դե՛, արի՛,— ասավ Շիրին-փահլըվանը։

Տեհավ որ չորս կողմը հավուզնի ա, քոչով լիքը. անգին քարով, ջավահիրով, գյուլբաթնով կարած։
Էդ չիմ,— ասավ,— քեզ փեշքաշ։ Դրա մի ջխտի գինը հազար
մանեթ ա։
Դրանն էրկու ջուխտ վեկալավ, բերուց իրանց կացարանը,
հարամբաշիներին շանց տվուց։
Շիրին-փահլըվանն ասավ հարամբաշիներին.—Հերիք ա ինչղըդար էս չոլերումը կացանք։ Ես գնամ ֆլան թքավորին խնդրվեմ, մեզ տան տեղ տա, տուն շինենք, կենանք։
Ասին.— Լավ ես ասում, գնա։
Դա ռավոտը գնաց էն ախչկա հոր կուշտը, որ իրուր նշան են տվել։
Թքավորն ասավ.— Ի՞նչ ղուլլուղ։
Շիրին-փահլըվանն ասավ.— Ուզում եմ գամ քու ձեռի տակին, մեկ տան տեղ տաս, գամ տուն շինեմ, կառավարվեմ։
— Ո՞րդի էս ուզում,— ասավ,— ո՛րդի աչքդ բռնում ա, ասա՛, տամ,— ասավ։
— Մի սեհրագահ տեղ կար,— ասավ,—խնդրում եմ էս տեղը տաս։
Տվուց։ Շիրին-փահլըվանը գնաց բազար՝ էն ախչկա տված մաշիկը ձեռին, որ ծախի, նրա փողովը ամարաթ շինի։ Նազիրը ռաստ էկավ, տեհավ մաշիկնին, ասավ,— Էս թանկագին մաշիկնին ո՞ւրդից ա քի՛, էս խազնի մաշըկնին ա, դու գողացել ես։
Շիրին-փահլըվանն ասավ.— Դրա ջուռիցը էլի բերեմ, իմացե՛ք, որ գողը ես չեմ, թե բերեմ ոչ՝ գլուխս տվեք։
Ասին.— Լա՛վ, գնա բի։
Ասավ.— Ինչքա՞ն բերեմ։
Ասին.— Մի թայ էլ ա բերես, հերիք ա։
Ասավ.— Լա՛վ։
Շիրին-փահլըվանը գնաց էն էրը, մի լիքը խուրջին բերուց իրա տունը, ըժու մի ջուխտ տարավ թքավորի աղաքը։
Ասավ.— Բերի՛, էն բռնվածը բերեք, թե իրուր նման ըլին, իմացեք դուզ եմ, գողը ես չեմ, թե նման էլան ոչ, ինչ ուզում եք արեք։
Բերին իրուր տվին, տեհան որ իրուր նըման են, մի ապրանք են։
Էտ ա բերին թքավորի նազիրին խեղդեցին, թե.— Զուր խի՞ շառ անեիր էդ մարդին։
Եդնա մի ջուխտ մաշիկ ծախեց մի լավ ամարաթ շինեց։ Շինեց, սարքեց, էկավ հարամբաշըքի կուշտը, ասավ.— Էկեք գնանք, ամարաթը պատրաստ ա, շինել-սարքել եմ։
Հընկորտանցը վիկալավ, էկավ ամարաթը, էրկու տարի մնացին միջին։
Էն բոլորն էլ խնդրվեցին Շիրին-փահլըվանին, թե.— Մենք ուզում ենք մեզ բոշ անես, մենք գնանք էլի մեր տեղը, ըստի չենք կարում կռավարվենք։
— Դե՛, տերը ձեզ հետ,— ասավ,— գնացե՛ք։
Մնաց իրա հերացվի կշտին։
Էս թքավորի ախչիկը մի թուղթ գրեց իրան հոր վրա, թե. «Էսքան տարի ես որ Օխտը գլխանի դևի ձեռին ի, խի՞ չես հարցնում, թե բա քի ո՞վ ազատեց ընդիան։ Ասեիր, թե ով որ քեզ աղատի ընդիան, համ իմ թագավորութինը պըտիմ տալ, համ իմ ախչիկս»։
Թքավորն էլ ասավ ախչկան.— Ես ըդքան իմաստուն չեմ, թե բանի տեղ գիտես, ասա՛։
— Բա՛,— ասավ,— չես ասիլ, ինձ ազատողը էդ տղեն ա, որ էկավ քեզանե տան տեղ ուզեց։
Թքավորն իմացավ, որ էդ տղեն ա իրան ախչկան դևիցը ազատել, կանչեց, ախչիկը էրետ դրան։

— Ասել եմ,— ասավ,— բերնիցս դուս ա էկել, իմ թքավորութինն էլ եմ քի տալի։
Շիրին-փահլըվանն ասավ.— Թքավորը ապրած ըլի, իմ ուզելացուկը էդ ախչիկն էր, որ տվիր։ Ես էլ ունեմ թաքավորութին, խնդրենք չնեղանաս, ես գնալու եմ իմ հոր քաղաքը։
Թքավորը օխտն օր, օխտը քշեր հըրսանիք արավ, դրանց պըսակեց, իրան ղարավաշներով, իրան ղոշունով ըղու արավ դբա իրա հոր քաղաքը։
Շիրին-փահլըվանը գնաց իրիկնապահը իրա հոր քաղաքը մտավ։ Է՜հ, գնաց տեհավ ամարաթնին փուլ էկած, տները քանդված, մոր դռանը վեր էկավ։
— Բա՛,— ասավ,— դեղի՛, ղոնաղ չե՞ս ուզիլ։
Թե.— Ղոնաղն աստունն ա,— ասավ,— խի՞ չենք ուզիլ, բայց ձեր շվաքը շատ ծանդըրն ա, կարալ չեմ քաշիլ։
Թե.— Ոչի՛նչ չկա՛, մի բան էլ ա ուզում չեմ քեզանե,— ասավ։
Վեր էկան, բոլ խարճըլուղ տվին, գնաց պառավը, առավ բերուց։ Կերան, խմեցին պրծան, ընդուցը եդնը Շիրին-փահլըվանը ասավ.— Դեղի՛, բա էս ոնց ա, տղա՛, բա՛ն ունիս ո՞չ։
— Ա՛յ որդի,— ասավ,— ես թքավորի կնիկն եմ, ես ունեի մեկ տղա, թքավորը որ վախճանվեց, էդ իմ տղեն, որ բազարը դուս ըլներ, ինչ ռեխա կուշտն ընկներ, մատով ընկաճի քոքին որ տեր, անկաճը պոկ գեր, դրա հմա տղերանց մերերը լալումիշ ին ըլում։ Ես էլ տարա մի յաբանու սարում աղի բըլիթ ուտացրի, շա՛տ ծարավեց, ծարավութենեն ինչպես հիվանդ ջանը վեր առավ, մնաց վեր ընկած։ Քունը տարավ, որ արնքնի[3] տեհա մեշեն ա մտել, ես ընդի թողի ու փախա էկա։
Շիրին-փահլըվանը ասավ.— Քու որդին էր, խի՞ ըտե անեիր։
Թե.— Ուրիշ ճար չգիտեի, խալխը լաց, ղիամաթ արին, ես էլ ըտենց արի։
Թե.— Հմիկ թքավորը ո՞վ ա։
Թե ասավ.— Ոսկան թքավորն ա, որ թքավորի վազիրն էր։
— Ո՛ր,— ասավ,— քու որդին քու աղաքդ գա, կճնանչե՞ս։
Ասավ.— Շատ տարի ա, կարելի ա, որ ճընանչիմ։
Ասավ.— Ինձ ճնանչո՞ւմ ես, ես ո՞վ եմ։
Նա թե.— Ճընանլում չեմ։
— Ես քու տղեդ եմ, Շիրին-փահլըվանը։
Ըտի մերը վիկացավ շընքովը ընկավ, նա էլ ծծերը պաչեց։
— Դե՛, մե՛ր,— ասավ,— ինչ որ արիր, ընդունում եմ. էս մարդը, որ ինձ որդի ա վիկալել, իմ հերացուն ա, ես էլ քեզ հմիկուց տալիս եմ էս մարդին։
Մերն էլ էդ զրիցը ընդունեց։ Իրան կարգովը ուզեցին, պսակվեցին, դառան մարդ ու կնիկ։ Մի ամսվան միջին իրանց ամարաթնին, իրանց տները շինեցին, սարքեցին, նստան։ Հըմի չիմն էլ իմացան, որ Շիրին-փահլըվանը էկել ա։ Ոսկան թքավորը շատ ահ ա քաշում, քշեր, ցերեկ քունը տանում չի. «Սա վերջը իմ գլուխը տալ պտի, իմ թաքավորութինն էլ խլիլ պտի. լավն ա, որ իմ կամքովը իրան տամ»։
Բերուց էդ Ոսկան թաքավորը շատ մի զարմանալի պատրաստութին տեհավ, քաղաքումը ինչքան որ մենձ, պուճուր կար, չիմ հացկերույթի կանչեց։ Հա՛, որ կերան, խմեցին, վեկենալու վախտը ասավ Ոսկան թաքավորը.— Ա՛յ խալխը, ես ուզում եմ, որ իմ թագը իմ ձեռովը դնեմ Շիրին-փահլըվանի գլխին, թքավորը սա ըլի, դուք էլ ուզո՞ւմ եք, թե՝ չէ։
Ասին.— Որ դու ուզում ես, մենք էլ ջիլիզ ենք ուզում։
Իրան ձեռովը Ոսկան թքավորը վիկալավ իրա թագը ու էրետ Շիրին-փահլըվանի գլխին։

---

3 Անընթեռնելի բառ—Ծ. Կ.։

Շիրին-փահլըվանն ասավ.— Եփ որ դու քու հոժար կամքովը քու թագը վիկալար, իմ գլխին դրիր, ես էլ քեզ իմ հոժար կամքով շինում եմ իմ աղաքին նազիր:
Ընուց եդը նորից Շիրին-թքավորը օխտը օր, օխտը քշեր հըրսանիք արավ, իրան կարգովը պսակվեց, եդնա օծվեց, դառավ Շիրին-շահ: Բարին ըստի, չարին ընդի:
Աստծանե իրեք խնձոր վեր էկավ. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ ալամ աշխարքին: